

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, 8 ՄԱՅԻՍ, 1930

ԹԻԻ 9

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՓՐՈՖ. Յ. ԴՐԻԳՈՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 75ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ

ՌՇՏՈՒՆԻ

ԿԱՆՏԻ

ՎԵՐ. Բ. ԼԵՒՈՆԵԱՆ

ՏՐ. ՁԷՅՄՊԸՐՍԻ ԾՆՆԴԵԱՆ 75ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ԱԻԵՏ. ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՁԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ «ԴՈՂԷՊ» ՀԱՂԷՊ

ՑԱՆԿ			ԱՆՈՒՆ		ՓԷՍՈ	
ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ Ի ՆՊԱՍՏ			ԿՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԵՒ ՀԱՅ		ԱԻԵՏ. Բ. ԵԿԵՂԵՑԻՒՆ, ՀԱԼԷՊ	
			(Շար. և Վերջ)			
ԲԱՂԱՔ	ԱՆՈՒՆ	ՓԷՍՈ				
Թալաս	Հրանդ Տէր Մարտիրոսեան	5	Աւետի	Սէնէքերիմ Բէտէրեան	5	
»	Կարապետ Բաղրատունի	5	Կէլի պօլու	Արաչ. Ասիպեան	2	
Արժէնթին	Սինիօր Փարազո	10	Էվէրէկ	Հայրապետ Մըսըրլեան	1	
»	Բ. Արմինակ	3	Աճառիա	Նշան Զիլպալեան	1	
»	Էլպէքեան Եղբարք	5	Մունճուսըն	Յարութիւն Թադէոսեան	1	
»	Փաթրօն	3	Թումարզա	Խաչիկ Սարգիսեան	1	
»	Մի ոմն	1	Սիճիմ	Գաբրիէլ Մըսըրլեան	2	
»	Աբրահամ Տէր Աբրահամեան	2	Չանապ գայէ	Յարութիւն Կէսվէնեան	2	
»	Միւսիւ Շամարեան	10	Սպարթա	Մկրտիչ Փլնիքեան	3	
Պէյլան	Կարապետ Էքշիեան	10	Տօրվին	Կարապետ Հրեշտակեան	4	
Իսկէնտէրուն	Իսքէնտէր Բիւփէլեան	10	Խարբերգ	Աւետիս Տէմիրճեան	2	
			Չէլթուն	Միսակ Սուրէնեան	7.50	
			Էրզրում	Աղաւնի Խորէնեան	1	
			Սըվկըն	Յակոբ Եէնիճէեան	1	
			Կիւրիւն	Միսակ Եսպոնպեան	2	
			Չունկուր	Արտաշէս Զիլֆէեան	5	
			Պանտըրմա	Իսրայէլ Ունճեան	2	
			Ակն	Միհրան Անտոնեան	5	

1930 տարուան «ՆՈՐ ԱԻԵՏԱՐԵՐ» կը նուիրեն՝

Պատ. Հայկազուն Ղազարեան Հօմս, Վեր. Պ. Դաւիթեանի՝ Սեւանիք.

Mr. G. Baharian, Ուօրսէթըր, Մէս., Տիկին Լ. Ուսթապաշեանի, Լարնաքա Կիպրոս.

Բարեկամ մը, Հալէպ, Տիար Յակոբ Միսկանիի Պ. Այրէս, Տիար Բերոբ Բէթէնճեանի Պ. Այրէս, Տիար Յակոբ Աւապաշեանի Պ. Այրէս, Տիար Մովսէս Բէթէնճեանի Դամասկոս:

Mrs. G. A. Gertmenian Փէսէտինա, Տիար Սամուէլ Գըրգեաշարեանի, Պէյրուս:

ՍՏԱՑԱՆՔ

ԲԱԶՄԱՎԷՊ, Թիւ 3 1930

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ, Թիւ 1-2 1930

ՍԻՈՆ, Թիւ 2, 1930

ԲԱՀՆԻԻՄԱ, Թիւ 6, 7, 8, 1930

ԳԵՐՄԱՆԻԿ, Թիւ 2, 1930

ՀՐԵՂԷՆ ՍԻԻՆ, Թիւ 4, 1930

ՅՈՒՇԱՐԱՐ, պաշտօնաթերթ Հ. Բարեգործական Ը. Մ. Ի Ամերիմայի Շըշանակին ԺՆ. տարի, Թիւ 142, 143, 144

ԲՈՐՈՒՎՈՒՄՆՈՒՆԴ, չաբաթական զաւեշտաթերթ, արտօնատէր խմբագիր Հայկ Գարապաշ, Թեհրան:

ՓԻԼՍՏՈՍ ՀԱՅԸ, կամ Կիլիկեայ Ճոխութեան Բուն Հիմնադիրը, անուն պատմական երկասիրութիւնը, հեղինակութիւն Կոմագենացիի, գինն է 10 ֆրանկ, ստանալու համար զիմել «Տպարան Գոլէճ»ի, B. P. 287, Alep, Syrie.

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 8 ՄԱՅԻՍ, 1930

ԹԻԻ 9

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՒ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Հսյ Աւես. Միութեան. ստեղծման ժողովին առթիւ

Միութեան այս տարուան ժողովը իր լրջութեամբը, կանոնադրութեամբը կը գերազանցէր նախկինները. ժողովին արժանի պատկառանք մը զգալի էր:

Օրակարգի վրայ շատ կարեւոր հարցեր կային որոնք աւելի ժամանակի կը կարօտէին վերջնական լուծում մը զըտնելու համար, եւ զորոնք նիւթերու խնդրումին պատճառաւ կարելի չեղաւ հանգամանօրէն նկատի առնել:

Պարզապէս նախախնամական պէտք է նկատել ներկայութիւնը Վեր. Մ. Փափագեանի, որուն օրհնաբեր գալուստին համար միտքերն ու սիրտերը երկար առաջ նախապատրաստուած էին արդէն: Վեր. Փափագեան մեծապէս օգտակար եղաւ իր թելադրութեամբը ուղղութիւն տալով կարգ մը խնդիրներու մէջ, եւ հոգեւոր մթնոլորտ մը ստեղծելով իր քրիստոնէական շինիչ պատգամներովը:

Համաժողովը ոչ միայն իբր խորհրդակցային ժողով մեծ կարեւորութիւն ունի, այլ նաեւ իբր համարառու վերին մարմին մը իրաւունք ունի հակակշռելու Միութեան բոլոր գործունէութիւնը: Կարգ մը կենսական հարցերու մասին համարձակութեամբ եւ լրջօրէն արտայայտութիւններ եղան, որոնք արդիւնաւոր ժողովի մը մէկ պայմանը կը կազմեն յաճախ: Սակայն յարմար էր երբեմն զըռնփակ նիստեր ունենալ այս երկրորդ կարգի խնդիրներու համար:

Եկեղեցիներու տնտեսագրութեանց

մէջ եւ ժողովի բովանդակ տնտեսութեան միջոցին շատ ուրախալի էր տեսնել այն գուրգուրալի զգացումն ու բարեկամական ոգին որ կը տածուէր Հայ Առաք. Եկեղեցիին հանդէպ: Ժողովի միջոցին երբ Գեր. Տ. Տ. Եղիշէ Արքեպս. Դուրեանի, մեր ժամանակներուն մեծագոյն Հայ կղերականին—մեծ իր հոգիով, իր մտքով ու տաղանդով եւ մանաւանդ աշնիւ կեանքով—մահուան գոյժը հասաւ, վշտով համակուեցան ներկաները, եւ միքանի վայրկեան յոտնկայս գլխահակ լուռ կեցան եւ անմիջապէս մարմին մը ընտելութեամբ Վեր. Տ. Տ. Ս. Կաթողիկոս Խաչայեանի եւ պէտք եղած տեղերուն Միութեան ցաւակցութիւնները յայտնելու համար:

Ժողովս նշանաւոր եղաւ նաեւ իր շօշափած կարգ մը շատ կարեւոր կենսական հարցերով եւ անոնց մասին տուած որոշումներովը.—ազգապետարանի կազմութիւնը, սահմանադրութեան հաստատումը, եկեղեցական շէնքերու ձեռնարկումը, երիտասարդութեան տրուած կարեւորութիւնը, Կիրակնօրեայ Դպրոցներու եւ Ջանից ընկերութեանց միութիւններուն պաշտօնապէս ընդունելութիւնը եւ այլն: Բայց աւելի կանոնաւոր, եւ արդիւնաւոր գործունէութեան եւ տրուած որոշումներուն գործադրութեան համար պէտք է աւելի կազմակերպաւ գրութեան եւ գործնական միջոցներու գիմել:

Այս տարուան հրատարակուած վիճակագրական տախտակը, որուն համար շնորհաւորելի է Գործադիր Մարմինը, շահեկան եւ հետաքրքրական է՝ մանաւանդ երբ զայն բաղդատենք 1926 ի վիճակագրութեան հետ: Սուրբիոյ եւ Լիբա-

նանի 21 եկեղեցիներուն և համայնքներուն մէջ արձանագրուած անհատներու թիւն է 8527, 356 աւելի քան 1926 թիւէն. բայց այս շրջանին մէջ չարձանագրուողներու թիւն ալ հաշուելով Հայ Աւետարանականներու ընդհանուր թիւը կը հասնի 10000 ի: Ծնունդներու թիւը 30 առ հազար (Անտիոքի հայ գիւղերուն մէջ 60 առ հազար) իսկ մահերունը 14 առ հազար եղած է: Եկեղեցիի հաղորդական անդամներու թիւը եղած է 1867, 257 հոգի աւելի քան 1926 թիւէն: Ութը եկեղեցիներու 15 Ե. Ք. Զանից ընկերութիւնները ունին 777 երկսեռ անդամներ, 45 պակաս քան 1926 թիւէն: Ժողովուրդին 47 առ հարիւրը կիրականորէն յայտնի կը յաճախէ: Նախակրթարաններու աշակերտութեան թիւն է 2564, 234 պակաս քան 1926 թիւը, ուսուցչութեան թիւն է 68 նոյնպէս 12 պակաս քան 1926 ինը:

Միութեան տարեկան պիւտճէն աւելցած է զգալի կերպով ինչպէս որ կը տեսնուի հետեւեալ ցուցակին մէջ. —

1926	Նպատակ	1930
Օսմ. ոսկի		Օսմ. ոսկի
2416.69	Դպրոց	4026.25
2644.08	քարոզիչ	3156.62
516.26	աղքատ	311.75
63.27	աւետարնչութիւն	106.50
214.39	չէնքեր	532.00
5854.69		8133.12

Այս ցուցակին համեմատ վերջացող տարուան պիւտճէն 2278.43 Օսմ. ոսկի աւելի է քան 1926 ինը. ուշագրաւ է մանաւանդ սա պարագան թէ դպրոցներու համար ծախսուած գումարը աւելցած է (1609.56 աւելի քան 1926 ինը) մինչդեռ ուսուցչութեան և աշակերտութեան մէջ զգալի նուազում մը կը տեսնուի: Միջին հաշուով իւրաքանչիւր աշակերտին համար 1.6 Օսմ. ոսկի ծախք եղած է:

Ժողովի բոլոր տնտեսութեան միջո-

ցին շատ զգալի կերպով կը տեսնուէր հոգեւոր խանդ, և ամէն ոք ունէր ատենէ աւելի կ'զգար հոգեւոր եղբայրակցութեան մտերմիկ շունչը: Պարագային յարմար ընտրուած էր նիւթը, որուն մասին կարգացուած ճառերը, կատարուած խորհրդակցութիւնները պէտք են առաջնորդել աւետարանչական խանդով զեղեւն ազգու գործունէութեան: Շատ ուրախալի էր տեսնել որ ճիշտ այն նըպատակով Մր. Հ. Րիկսի կողմէ ծրագիր մը ներկայացուեցաւ, որ միաձայնութեամբ ևս ընդունուեցաւ ժողովին կողմէ: Այս ծրագիրը բոլոր ժողովին նշանակէտը կը կազմէր: Արդ կ'ազդէր և կը յուսանք որ եկեղեցիները յառաջիկայ տարուան միջոցին աշխատին այս ծրագիրը իրագործելու արդիւնաւոր և յաջող կերպով:

ՀՍՄԱԶԳՍՅՈՒՆ ՍՈՒԿԸ

Բոլոր հայութեան սիրտը խոր կսկիծով համակուած է Երուսաղէմի Պատրիարքին, Ամեն. Տ. Տ. Եղիշէ Արքեպս. Դուրեանի, և ամենայն Հայոց Կաթողիկոսին, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Դէորդ Ե. Սուրէնեանցի իրարու արագօրէն յաջորդող մահուան գոյժերը լսելով: Անփոխարինելի է կորուստը Հայ Առաք. Եկեղեցիին, որ այնքան պէտք ունէր աւելին մեղմէ անդարձ բաժնուող այս երկու մեծ հովիւներուն: Սուգին խորութիւնը աւելի կ'զգանք երբ նկատուինք կովկասահայաստանի մէջ քրիստոնէական եկեղեցիին վիճակը, զուրկ տարրական միջոցներէ և եկեղեցիայ անդամաւորէի ճնշումներու, որոնց ծանրութեան տակ միշտ «Վշտակիր» սիրտ մը կրեց Սուրէնեանց: Իսկ Միջերկրականի արեւելեան փերուէն վրայ Հայ Եկեղեցին հազիւ սկսած վերամփոփման շրջան մը բոլորել, կը կորսնցնէ իր մեծագոյն առաջնորդը: Ներկայիս բոլոր հայութեան հետ կ'զգանք մեծ կորուստին դառնութիւնը, և ցաւակից սրտով մը կը մօտենանք Շնորհալոյ Գահուէն խորհրդով իր երկնային առաջնորդութիւնը շնորհել այս բազմոտկարօտ հօտին:

ՅՕԴՈՒԱՄՆԵՐ

ՓՐՈՖ. Յ. Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ
ՄՆՆԴԵԱՆ 75ԻՂ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Նախկին Կ. Թ. Գոլէճի հալէպաբնակ սաները գնահատելի գաղափարը յղացել էին յարգանքի և գնահատումի ցոյց մը ընելու Փրոֆ. Յ. Գրիգորեանի 75ԻՂ տարեդարձին առթիւ: Կարգադիր յանձնախումբը Վեր. Ա. Շիրաճեանի ատենապետութեան տակ իր բոլոր ճիգը թափած էր փայլուն և հանդիսաւոր կերպով տօնելու համար այս տարեդարձը:

Ապրիլ 13ին, իրիկուան ճիշդ ժամը 7.30ին հանդէսը սկսաւ, որուն կը նախագահէր Փրոֆ. Զենոբ Ա. Պէլճեան: Խոսուեցաւ բազմութիւն մը լեցուցած էր Ազիզիէի Հայ Աւետ. եկեղեցիին սրահը: Հանդէսին մասնաւոր փայլ տուին նուագախումբի նուագները, երգիչ խումբի «փառաւոր»ը, Պր. Ս. Կանիմեանի և Դանիէլեանի, Օրք. Զ. Քիւփէլեանի և Նալչաեանի քառերգը, Օր. Մ. Կիւլէսէրեանի մեներգը: Տիկ. Լ. Յովնանեանը իբր երգիչ խումբի վարիչ, Օրք. Պ. Լոշխաճեան և Իշխանեան՝ իբր երգչոճի նուագիչ, Պ. Պ. Լ. Բուպեան և Վ. Ծէպէճեան և ընկերները իբր նուագախումբի անդամներ մեծ բաժին ունեցան հանդէսին զեղարուեստական մասին մէջ:

Փրոֆ. Զ. Պէլճեան յայտնելէ ետքը թէ ինչ է այսպիսի հաւաքոյթներու արժէքը և թէ Հալէպ պէտք էր կանխել Նիւ Եօքը Գրիգորեանի հանդէպ իր յարգանքն ու գնահատումը յայտնելու մէջ, բեմհրաւիրեց Տօքթ. Ա. Ծէպէճեանը խօսելու համար:

Յարգելի տօքթորը յորեւեարին կարճ մէկ կենսագրականը գծեց, նկարագրելով այն ընտանեկան պարագաները և միջավայրի պայմանները որոնք որոշ ազդեցութիւն մը ունեցան այս մեծ նկարագրին կերտումին մէջ: Մարմինով քաջառողջ և հոգիով բարեպաշտ ծնողներ,

զօրաւոր կամքով թունդ լուսաւորչական մայր մը, ծնունդ տուած էին այս ապագայ առաջնորդին 1855ին մէջ: 1870-1876 կ'աշակերտի Մարաշի Աստուածաբանականին, ուր հաստատուած միջընկերային սերտ բարեկամութիւնները կը շարունակեն մինչեւ որ մահը զիրենք իրարմէ կը բաժնէ: 1876-1880 ուսուցիչ նորաբաց Կ. Թ. Գոլէճի մէջ, 1880-1883 ուսանող Ամհէրսթ և Նէյլ համալսանքները 1883-1902 փրոֆէսոր հոգեբանութեան Կ. Թ. Գոլէճի մէջ, և 1902էն իվեր խմբագիր «Աւետարեւր»ի և «Րահնիւմա»ի: Տօքթորը վերջացուց իր խօսքը ներկայացնելով Գրիգորեանը իբր զօրաւոր միտք մը, կորովի կամք մը, վստահելի բարեկամ մը, որուն ներգործիչ և վերացուցիչ ազդեցութեան ենթակայ եղած են անոնք որ իրեն հետ ուէ կերպով շփում մը ունեցած են:

Ապա քառերգէ մը ետքը, Տօքթ. Ա. Ալթունեան խօսեցաւ ներկայացնելով Փրոֆ. Գրիգորեանը իբր աշակերտին իրական արժանիքը գնահատող ուսուցիչ մը, յարատեւ և յամառ գործիչ մը, ողջամիտ և իրական փիլիսոփայ մը: Երբորդ խօսողն էր Տր. Ժ. Է. Մէրիւ. «Իր մանկութիւնը չեմ գիտեր», ըսաւ նախկին Կ. Թ. Գոլէճի նախագահը, «զինքը ճանչնալու առիթը ունեցայ գոլէճի մէջ: Երբ իր մասին խորհինք ան մեզի կը ներկայանայ իբր ուսուցիչ, իբր քարոզիչ, և իբր հրապարակագիր: Անիկա ուսուցիչ էր, այդպէս ըլլալ ուզեց և այդպէս ալ գործեց: Իր ժամանակին աւելցած մասը միայն քարոզչութեան յատկացուց. բայց անոր քարոզչական ազդեցութիւնը պաշտօնական բնութեամբ չէր սահմանափակուած: Կ'ըսեն թէ Կ. Թ. Գոլէճի բոլոր աշակերտները քարոզիչ կ'ըլլան. անոր պատճառը Փրոֆ. Գրիգորեանն էր, որուն աշակերտները «Ապացոյց Քրիստոնէութեան» գառն իրենց առած ծանօթութիւնները ուրիշներու մէջ կը տա-

րած էին վագանձի միջոցին:

Վեր. Փափազեան Այնթապի ժողովուրդին ծանոթացուց վազիյեթ (գիրք-attitude) բառը. իսկ Փրոֆ. Գրիգորեան ծանոթացուց իսեալ (գաղափարական) բառը, զոր Ամերիկայէն միասին բերած էր:

Փրոֆ. Գրիգորեան քրիստոնեայ մ'է, Հայ մ'է և Բողոքական մըն է: Իբրև քրիստոնեայ այն տարածեց քրիստոնէական ճշմարտութիւնները նոյնիսկ իսլամներուն, որոնք երբեմն Գուէճ կուգային իրեն հետ խօսակցելու հոգեւոր նիւթերու շուրջ: Աստուծոյ մէկն էր Հաճի Շէմ, անուն Թուրք մը, որ 1919 ին քսվա եկաւ և ըսաւ. «Ես Ատանա կ'երթամ ընտանեօք, բայց մեկնելէս առաջ երեք բան կ'ուզեմ քեզի յանձնել. մէկը՝ իմ Գուրանս, երկրորդ՝ խումբ մը մարդիկ, որոնք ո'չ քրիստոնեայ են և ո'չ ալ իսլամ բայց որոնց մէջ հոգեւոր բան մը սկսած է ծլիլ, և երրորդ՝ իմ տունս, զոր կը խնդրեմ որ քրիստոնէական զործունէութեան կեդրոն մը շինէք, և առաջին առթիւ իսլամ աղջկանց համար դպրոց մը բանաք:» Այս մարդը անցեալ տարի մեռած է Ատանա, ուր մեռնելէ առաջ իբրև քրիստոնեայ մկրտուած է:

Գրիգորեան Հայ մըն է, ինքը ջատագովը եղած է այն սկզբունքին թէ Բողոքականներ եկեղեցականէն զատ բոլոր մարդերուն մէջ պէտք է միանան իրենց ազգակիցներուն:

Անիկա Բողոքական մ'է, այդ եկեղեցիին մէջ ծնած ըլլալուն համար չէ այլ այդպէս համոզուած ըլլալուն համար:

Պատերազմէն առաջ եւ թերեւ հիմա ալ իրեն պէս ուսուցիչներ գտնել դիւրին չէ. ինք եւ նմանները տիպար ուսուցիչներ էին որոնց նշանաբանն էր ծառայել:»

Չորրորդ խօսողն էր Փրոֆ. Զ. Պէլճիեան որ յայտնելէ հոքը թէ Փրոֆ. Գրիգորեան էր որ առաջին անգամ Եւ-

րոպական երաժշտութիւնը մեր մէջը ներմուծեց (Այնթապ), թէ ճայնավար-ժութեան իբր ուսուցիչ եւ իբր աննման թէնոր երգիչ մեծապէս նպաստեց անոր տարածման, այսպէս շարունակեց. «Մենք հոս գովեստ հիւսելու չեկանք, այլ եկանք նախ՝ մաղթելու որ ան տակաւին երկար ապրի, երկրորդ՝ գնահատելու անոր ծառայութիւնը և երրորդ՝ տեսնելու թէ ի՞նչ է անոր պատգամը ներկայ սերունդին:» Եւ ապա յորեւիտարը ներկայացուց հետեւեալ կերպով:

Գրիգորեան զաղափարապէս մէկն է. անիկա կը հաւատայ արդարութեան, ճշմարտութեան և հաւատարմութեան, մաքրութեան և գեղեցկութեան: Անիկա կը քարոզէ իր հաւատքը և կ'ապրի զայն. աննման օրինակ մ'է ան երիտասարդներուն համար: Շահը, զրամը, վարձատրութիւնը իր մտքին մէջ երբեք տեղ չեն գրաւած. Ապրիլ անոր համար ուտել չի նշանակել: Նիւթապաշա հոսանքին գէժ յաջողութեամբ մաքառող մեծ ոյժ մը եղած է:

Ճշմարտութեան հաւատարիմ է ան. պատեհապաշտ ընթացքի մը երբեք չի հեռուիր, «բոլոր աշխարհը այսպէս կ'ընէ» սկզբունքին հակառակ է բոլորովին: Ան կը կատարէ ինչ որ կը խորհի թէ չի տակ է, նոյնիսկ իթէ առանձին մնայ և բարեկամներու նեղութիւն պատճառէ:

Խոնարհ մէկն է. Ներկայ ժամանակս փրփրականտի, լէքլամի դարն է. կոտարել ինչ որ պարտականութիւն է և երբեք չպարծենալ՝ շատ քիչերուն մէջ կը տեսնուի, բայց մեծութեան մէկ պայմանն է այն:

Փափկանկատ մէկն է փրփէսորը: Իր պաշտօնին բերումով վիճաբանութեան մէջ կը մտնէ, որ սակայն իրեն համար կռիւ չի նշանակել. անիկա իր տեսակէտին վրայ հաստատ կը մնայ բայց քաղաքավարութեան սահմանին

մէջ. անիկա յամառ բայց չափաւոր մէկն է:

Անկեղծ հոգի մ'ունի Գրիգորեան. դպրոցին մէջ ինչ որ է նոյնն է նաեւ տան մէջ, ինչ որ է իր առանձնարանին մէջ նոյնն է նաեւ հրապարակի վրայ: Ամէնէն աւելի ցոյցէ և կեղծիքէ կը խորշի ան. ահա իր մեծութեան գաղտնիքը, որ զինքը ամէնուն սիրելի դարձուցած է:

Ընկերասէր եւ կարեկից սիրտ մ'ունի սիրելի Փրոֆէսորը: Մինչև հիմա տակաւին չեմ մոռցած այն պահերը երբ երիտասարդութեանս միջոցին իրեն կը դիմէի իմ կասկածներուս եւ դժուարութիւններուս մէջէն ելք մը գտնելու համար: Վստահելի եւ գաղտնապահ խոստովանահայր մ'էր ան:

Յառաջդիմական մէկն է ան. միշտ նոր ճշմարտութիւններու բաց սիրտ մը և միշտ երիտասարդ մնացող հոգի մըն է:

Իրեւ հրապարակագիր կը գտնէ օրուան նիւթերուն կարեւորագոյնը եւ կը գրէ տրամաբանօրէն և կուռ ոճով մը: Գիտեմ թէ յաճախ ան իր լաւագոյն յօդուածները մէկ անգամէն կը գրէր կէս ժամուան մէջ: Թերութիւն մ'ունի սակայն. եթէ պէտք եղած չափով Հայերէն զիտնար չատ աւելի օգտակար պիտի կրնար ըլլալ:

Մեծ ազգասէր մըն է Գրիգորեան: Ազգասիրութեան մասին գաղափարները կրնան իրարմէ տարբերիլ. անիկա միշտ իր ազգին բարձրագոյն շահը կը խորհէր. իր գաղափարներուն մէջ ծայրայեղ չէ և միշտ պատրաստ կը գտնուի իրմէ տարբեր խորհողներուն կարծիքները գնահատելու: Ազգային զարգացումին մէջ բիրտ ոյժէն աւելի բարոյական ոյժին կը հաւատայ:

Միջարանուանական յարաբերութեանց մէջ համերաշխութեան կուսակից է ան: Վերջերս ան զօրաւոր կերպով պաշտպանեց սա թեզը թէ Լուս. և Բող. համայնքները պէտք է միանան

ոչ-կրօնական հարցերու մէջ:

Իրեւ վերջին կէտ մը պէտք է յիշել Գրիգորեանի բարեկամութիւնը նահատակուած Փրոֆ. Ս. Լեւոնեանի հետ. այս հիանալի բարեկամութիւնը մեծապէս սատարեց այս երկու հոգիներուն զարգացումին:

Իցիւ թէ Գրիգորեանի ներկայութիւնը վայելէինք հոս, թերեւս այսչափ համարձակ չպիտի կրնայինք խօսիլ, բայց եթէ հոս ըլլար պիտի ըսէր. «Դո՛վեոտով մի բաւականանաք, փառքն ու պատիւը Աստուծոյ տուէք եւ եթէ բարի բան մը կը տեսնէք, ապրիցէ՛ք զայն»:

Վերջին խօսողը եղաւ Տ. Ներսէս Հայր Թափուգճեան որ իրեն յատուկ յետադիմ և ազդու ոճովը հաստատեց յիշուած կէտերէն երկուքը յայտնելով Գրիգորեանի անկողմնակալ խորհողութիւնը, վիճաբանութեան մէջ փափկանկատութիւնը և անշահասիրութիւնը:

Ապա խուռն բազմութիւնը ոտքի վերայ փառաբանութեան երգը երգեց եւ Տէր Ներսէս հօր մաղթանքէն ետքը բաժնուեցաւ այս յոյժ տպաւորիչ եւ կրթիչ հանդիսութեան սրահէն գոհունակութեան ժպիտը շրթներուն վրայ:

Փրոֆ. Յ. Գրիգորեան նամակով մը իրեն ուղղուած հարցումին պատասխանելով կը յիշէ այն դէպքերն ու անձերը որոնք կարեւոր ազդակներ եղած էին իր կեանքին մէջ: Իր ծնողքը, Փրոֆ. Ալեքսան Պէզճեան, Մր. Մօնթ-կօմրի Մարաշի մէջ, Ամհէրսթի եւ Նէյլի մի քանի Փրոֆէսորները, եւ Փրոֆ. Ս. Լեւոնեանի հետ բարեկամութիւնը որ շատ կանուխէն կ'սկսի. Գրիգորեան կը յիշէ թէ շատ անգամ երկուքն ալ զործը ձգելով (ոստայնանկութեամբ կ'գրադէին այն ատեն) քաղաքին մօտակայ Գուրպան Պապա բլուրը կը մեկուսանային իրարու հետ երկարօրէն սրտակցելու եւ իրենց կեանքի փորձառութիւնները բաժնելու համար:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՅՐԵՐ

5. Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ

6. Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

(Գ.)

3. Կրթական, Դրական Կրօնական Կեանքի:
Հայ գրի գիւտէն անմիջապէս վերջ՝
Սահակ-Մեսրոպ-Վառաժապուհ երրորդ-
ութիւնը կը լծուի խանդավառ գործունէութեան զոր կարելի է դասաւորել հետեւեալ կերպով:

Ա. Մշակներու պատրաստութիւն: Անոնք՝ ուշիմ և ապագայ խոստացող պատանիներ կ'ընտրեն և պետական ծախքով Եղեսիա, Հռոմ, Պոլիս, Կեսարիա, Աթէնք և Աղէքսանդրիա կը ղրկեն, լեզուի և ուսման տիրանալով Հայաստան դառնալու և ապագայի արժանաւոր մշակներ, դաստիարակներ եւ կղերականներ լինելու ծրագրով: Ասոնք երկու կարգի կը բաժնուին ա. երէց թարգմանիչներ, ք. կրտսեր թարգմանիչներ: Այս պատանիները գացին և սիրալիր ընդունելութիւն գտան արտասահմանի մէջ և աշակերտական փայլուն շրջաններ բոլորելէ վերջ դարձան հայրենիք, իրենց հետ բերելով քաղաքակիրթ ազգերու և ոստաններու բարգաւաճ գրականութիւնը, իմաստասիրութիւնը եւ գիտութիւնը: Ասոնք ճշմարիտ օրհնութիւն մը դարձան հայաշխարհի, լինելով մէյմէկ փառապսակ կոթողներ հայ Ոսկեդարու: Աւագ քարգնանիչներէն կարելի է յիշել Յովսէփ Կաթողիկոսը, Ղեւոնդ Երէցը, Եգնիկ Կողբացին, Կորիւն պատմիչը և Մուշէն. իսկ կրօնականներէն՝ Դաւիթ Անյաղթ Փլիլիսոփեան Գիւտ կաթողիկոսը, Յովհան Մանդակունին, Եղիշէ Պատմիչը, Խորենացին Մովսէս, քերթողահայր պատմահայրը, Մամբրէն և Ղազար Փարպեցին և այլն: Ասոնք բազմաթիւ երկերու հեղինակ դարձան, որոնցմէ շատերը հասեր են մեր ձեռքը, իբրեւ հոյակապ փաս-

տեր Ոսկեդարու ոսկեղէն լեզուին, անգերազանցելի ոճին և խորունկ ու կուռ իմաստին: Ասոնցմէ շատերը թարգմանուած են Լատիներենի, Գերմաներէնի, Ֆրանսերէնի, անգլերենի և ռուսերէնի, որովհետեւ հետաքրքրութիւն արթնցուցեր են անոնք օտարներու մէջ, այդ երկերու միջոցաւ լոյս սփռելով շրջանին պատմական, իմաստասիրական եւ աստուածաբանական հարցերուն շուրջ:

Բ. Կրթական նիւթեր: Վերի աշխատանքներու զուգընթացօրէն Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ ամբողջ հայաշխարհը զարոցներու ցանցով մը պատեցին: Կրթական այդ վառարաններու ներշնչող ոգին՝ Ս. Մեսրոպն էր. ոգևորող, խանդավառող և դաստիարակող ոգին, վարիչը ամբողջ գործին, որ գիւղէ գիւղ և աւանէ աւան կը վազէր զարմանալի անխոնջութեամբ մը, տեսուչներ կը կարգէր, կը յորդորէր, կը խրախուսէր, հոգիէն հոգի եւ քրտինքէն քրտինք կուտար... ամէնէն հեռաւոր անկիւններն իսկ եռանդի եւ վերազարթնումի կայծեր սփռելով: Ս. Մեսրոպի կեանքին մէջ այս տարիներն էին որ կ'ապրէր ան՝ իր իրապէս երջանիկ օրերը: Ի՞նչ բարեբախտութիւն իսկապէս, որ երկինք յաջողութեամբ պսակած էր իր յոյսերուն եւ երազներուն բոլորը և ահա ինքը վաղնիկ վաղ կը հետեւէր այդ երազներուն իրականութիւն մը ըլլալը տեսնելով, վայելելով եւ օրհնելով զԱստուած ամէն տեղ, եւ ամէն քայլափոխին: Եւ այն՝ արժանի էր այդ վարձատրութեան: Հոգեկան այդ վայելքին հրաշալի:

Գ. Թարգմանական եւ ինքնագիր գործեր: Երկու վարպետներու ծունկին տակ կարգ մը արժանաւոր աշակերտներ կ'սկսին Ս. Գիւրքը և եկեղեցական ծիսարանը հայրենի թարգմանել, մեծ խանդավառութիւն ստեղծելով ամէն տեղ, որովհետեւ զրի գիւտին իրական շարժառիթը արդէն

այս էր, փրկել հայ ժողովուրդը, օտար լեզուով կասարեղէ իր պաշտամունքը և օտար բարբառով կարդալէ իր նախնեաց Ս. հաւատքը փառաբանող, պարզող և մխիթարող Ս. Դիրքը: Ս. Գրոց թարգմանութեան վրայէն և առաւելապէս Ս. Սահակի ձեռքով, որովհետեւ Ս. Մեսրոպ յաճախ կը բացակայէր քիչ վերը յիշուած կրթական և դպրոցավարական գործերով կլանուած ըլլալով: Այս թարգմանութիւնը այսքան խնամով և ձեռնհասութեամբ կատարուած է որ յիշուած է «թագուհի թարգմանութեանց»: Ասկէ զատ Ս. Սահակ զրած է Կանոնականքաւորը 6 զլուսններէ բաղկացեալ. իսկ Ս. Մեսրոպ՝ Մաշտոց անուանով ծանօթ գիրքը, որ ծիսական ուղեցոյց աղօթագիրք մըն է:

դ. Վանական կաթողիկոսութիւն: Բանասէրներէ ոմանք կը հաւաստեն որ Ս. Մեսրոպ՝ Սպեր գաւառի մէջ միաբանութիւն մըն ալ կազմակերպեց, հոգեւոր և գրական նպատակներու համար, տեսակ մը Դպրեվանք կամ Վարդապետանոց:

ե. Աղանդաւորներու դարձի գործը: Իր շրջած գաւառներէն ոմանց մէջ հայ աղանդաւորներու հանդիպած ըլլալով՝ Ս. Մեսրոպ աշխատեցաւ զանոնք դարձի բերել իրենց մոլորած շաղկէն և ընդունիլ հայ եկեղեցւոյ ծոցը, իսկ անոնցմէ մօլորութեան յամառօրէն կառչողները երկրէն դուրս վտարել տուաւ, որովհետեւ անոնք Աւետարանի վարդապետութիւնները կը խեղաթիւրէին:

զ. Առաքելական գործունեութիւն: Այսքան բազմազբաղ կեանքի մը մէջ Ս. Մեսրոպ վրաց և Աղուանից համար ալ գիրեր յօրինեց և անոնց մէջ զպրոցներ բացաւ, կրթութիւնը և ուսումը տարածեց ու իր հիմնած կրթարաններուն վրայ տեսուչներ կարգեց:

Անոնց բազմաբեղուն կեանքին ամէն մէկ քայլը և ամէն մէկ գրուած մեղի տրպար օրինակ մը կրնայ դառնալ ծա-

ռայելու, խոնարհելու բարձրացնելու մէջ գտնուող իսկական հաճոյքը ճանչնալու և ըմբոշխնելու տեսակէտով: Անոնք ձեռք ձեռքի տուած ամբողջ 40 տարի տքնեցան, քրտինք և արցունք ցանցին և հոյակապ արգասիքներ հնձեցին, դարերու ժառանգ ձգելով անուն մը, որ անաղարտ, թանկագին և գուրգուրալի է մնացած 1500 տարիներու փոթորիկներէն և վերիվայրումներէն վերջն ալ: Անոնք կարծես խօսքն ալ մէկ ըրած զրեթէ մէկ տարուան մէջ կը շիջանին, ձէթը սպառող կանթեղներու նման, յոգնաբեկ, հալած և մաշած:

Ս. Սահակ կը վախճանի 438ի վերջերը, իսկ Ս. Մեսրոպ՝ անկէ վեց ամիս վերջ, 439ի սկիզբները: 441ին Ս. Մեսրոպի հոգակոյտին վրայ եկեղեցի մը կը շինուի որ աւերուած ըլլալով 1879ին կը վերաշինուի և 1882ին տապանաքար մը կը դրուի անոր յաւէտ խնկելի դամբանին վրայ, Վաղագշապատ:

Հաղեպ

(ՎԵՐՋ)

ՌԵՏՈՒՆԻ

ՄԱՀԱԹՄԱ ԿԱՆՏԻ

Հոռով. 12. 21. «Զարեմ մի յաղբուի, հապաւ բարիով յաղբի չարիւն»:

Աւետարանի ճշմարտութիւնները իրական արժէք և ուղղութիւն կը հապնին, երբ կեանքի կը փոխակերպուին, երբ անձնաւորութեան մը մէջ կը մարմնանան:

Նոր Կտակարանի այս ամենէն գեղեցիկ և վեհափառ պատուիրաններէն եւ զող այս պատուիրանին այսօր թերեւս լաւագոյն մարմնացումն է Հնդկաստանցի Մահաթմա Կանտին:

Եթէ այսօր երկրիս վրայ երկու անձնաւորութիւններ կան որոնք տիրական ու տիրակերական խոր ազդեցութիւն կը ներգործեն աշխարհի բարոյական և հոգեկան կեանքին վրայ, այդ երկու անձերն են Սադու Սունդար Սինկ և Մա-

հաթմա Կանտի, երկուքն ալ բնիկ Հնդկաստանցիներ:

Կանտի Ֆրիքապէս անուշազրաւ մարդ մըն է, կակուզ սե աչքերով, պղտիկ տկար մարմնով, տափակ երեսով. քիչ մը դուրս ցցուած աչքերով մարդ մըն է, հազիւ թէ 43 օգա կը կշռէ, գլխուն վրայ կը գնէ պղտիկ ճերմակ գլխարկ մը, կը հագուի կոշտ ճերմակ հանգերձ մը և կը պտըտի բոպիկ ոտքերով: Ան կ'ապրի բրինձով և պտուղով և կը խմէ միայն ջուր: Կը պառկի գետինի վրայ, կը քնանայ շատ քիչ և կը գործէ անդադար: Ան կարծես թէ մարմինի մէջ չէ: Դիմագիծը անհրապոյր է, բայց իր գէմքը կ'արտայայտէ անհուն համբերութիւն և սէր: Ան ոմանց կը յիշեցնէ Աստիգեցի Ս. Յարանչիկոսը: Անոր վրայ կը տեսնուի մանկական պարզութիւն մը: Իր վարմունքը մեղմ ու քաղաքավար է, նոյնիսկ երբ թշնամիներու հետ կը վերաբերուի: Իր անկեղծութիւնը անխորհրդաւ: Ան երբեմն վախկոտ եւ վարանոտ ըլլալու աստիճան ամօթխած եւ պարկեշտ է: Նոյն ատեն կրնաս զգալ անոր անպարտելի հոգին: Ան երբեք իրաւաստութիւն (սակիրուսյոյ) չ'ընէր և երբեք չ'աշխատիր սխալ մը կամ յանցանք մը քօղարչել: Ան գիւանդիտութիւն չի գիտեր: Ճարտասանական բանաձեւերէ կ'զգուշանայ եւ ժողովրդական ցոյցերէ կը խուսափի: Զինք պաշտող բազմութեանց մէջ անհանգիստ կ'զգայ, եւ ուրախ կ'զգայ երբ կրնայ առանձնանալ, խոկալ եւ ներսէն եկող մեղմ ու խաղաղ ձայնին ունկնդրել: Ահա այս է այն մարդը, որ 300 միլիոն ժողովուրդը ոտքի հանած է եւ Բրիտանական կայսրութիւնը ցնցած է:

Իր բուն անունն է Մոնսիէսկու Բորիւս Զանս Կանսի: Ան ծնած է Հոկտ. 2, 1886ին, Փորհանտէրի մէջ, որ Հնդկաստանի Հիւսիս-Արեւմտեան մասին մէջ կիսանկախ նահանգի մը մէջ կը գտնուի:

Ան կը սերի աշխոյժ, գործունեայ եւ մտայի ցեղէ մը, որ անկախութեան տենջով բոցավառուած է: Կանտի հայրը եւ մեծ հայրը իրենց բնաշխարհին մէջ առաջնորդող անձեր եղած են: Կանտի ընտանիքը բարեկեցիկ է եւ բարեկիրթ դասակարգին կը պատկանի: Անոնք կը վերաբերին Հնդիկ Այյին ակադեմիին, որու հիմնական դաւանանքներէն մին է՝ ունէ ապրող էակի և ինքնագոյնի վրաս չհասցնել: Ճայինանները կը հաւատան թէ Աստուծոյ առաջնորդող արահետը բանականութիւնը չէ, այլ սէրն է: Կանտի հայրը նիւթական հարստութեան շատ կարեւորութիւն չէր տար, եւ ան գրեթէ իր բոլոր ունեցածը իբր ոգորմութիւն բաշխեց: Կանտի մայրը շատ բարեպաշտ, ծոմապահ, ողորմող, հիւանդները խնամող կին մըն էր: Կանտի պղտիկութենէ սկսաւ ուսանիլ Հնդիկ Սր. Գրուածքները: Հնդկական սովորութեան համաձայն՝ ան նըշանուեցաւ 8 տարեկանին եւ ամուսնացաւ 12 տարեքին մէջ: Բայց հիմա ան հակառակ է մանկանց ամուսնութեան:

19 տարեկան հասակին մէջ, Կանտի Լոնտոնի համալսարանը զրկուեցաւ, իր օրէնսգիտութեան ուսումը կատարելագործելու համար: Հնդկաստանը չձգած, իր մայրը իրեն երգում ընել տուաւ՝ հաւատարիմ մնալ Այյիններու ուխտին, այսինքն գինի չի խմել, միս չուտել եւ սեռային յարաբերութիւն չընել: Լոնտոնի մէջ, Կանտի աշխատեցաւ նախընթացը արեւմտացնել, բայց վերջապէս համոզուեցաւ թէ իր փրկութիւնը Հնդիկ մնալուն մէջ է: 1891ին Հնդկաստան վերադարձաւ, իր մօր տխուր մահէն քիչ վերջ, և սկսաւ Պոմպէյի բարձրագոյն ատեանին մէջ իբր փաստաբան աշխատիլ: Սակայն քանի մը տարի վերջ փաստաբանութիւնը ձգեց, այս գործը անբարոյական նկատելով:

Կանտի հանրային գործունէութիւնը կարեւր է երկու շրջանի բաժնելու: Հա-
րաւային Ափրիկէի գործունէութիւն՝
1893-1914, եւ Հնդկաստանի գործու-
նէութիւն՝ 1914է մինչեւ հիմա: 1890-
91ին 150,000 հնդկներ Հարաւային Ափ-
րիկէ գաղթեցին: Տեղական կառավա-
րութիւնը ասոնց դէմ աննպաստ օրէնք-
ներ անցուց եւ ամէն կերպով զանա-
նեղել, կեղեքել եւ հալածել սկսաւ, այն
աստիճան՝ որ կեանքը անոնց համար ան-
տանելի դարձաւ: 1893ին Կանտի հոն
հրաւիրուեցաւ, դատական ամբաստան-
եալ մը պաշտպանելու համար: Երբ հոն
հասաւ, իր հնդիկ ըլլալը զգաց: Իբր
հնդիկ՝ ճերմակներու կողմէ քանի տեղեր
նա օթէլներէն եւ թրէշներէն դուրս քըշ-
ուեցաւ, նախատուեցաւ, ծեծուեցաւ եւ
աքացուեցաւ: Այս բաներուն մէջ նա
սորվեցաւ անձնագրագրութիւնը: Եւ նա
որոշեց անձար եւ անպաշտպան ազգա-
կիցներուն իբրեւ ռահվիրայ եւ պաշտպան
կանգնել հոն: Կանտի հոն կեցաւ ան-
յողողող կամքով մը եւ կառավարութեան
դէմ 20 տարիներ, գրեթէ միայնակ
մարտնչեցաւ, մինչեւ որ փաստեց հակա-
հնդկական օրէնքներուն ապօրինի ըլլալը,
հանրային խիղճը արթնցուց եւ այդ օ-
րէնքները շտկել տուաւ: Ափրիկէի մէջ,
Կանտի զոհեց իր բարձր առանձնաշնոր-
հումները, զոհեց իր վաստակաբեր պաշ-
տօնը՝ որ իրեն տարեկան 5000-6000 ոս-
կի եկամուտ կը բերէր, Ս. Ֆրանչիսկոսի
նման աղքատութիւնը որդեգրեց, ինք-
զինքը նոյնացուց իր ազգակիցներուն
հետ, անոնց հետ եւ անոնց պէս ապրե-
ցաւ: Եւ թերթեր հրատարակելով եւ
խմբակցութիւններ կազմակերպելով՝ ա-
նոնց վիճակը բարւոքելու եւ կեանքը
ազնուացնելու աշխատեցաւ: Կանտի
կրցաւ իր ցեղակիցներուն հաղորդել բո-
նութիւն չորս զործածելու գաղափարը: Եւ
վերջապէս Բրիտանական բոնի ուժը ըս-
տիպուեցաւ խոնարհիլ հերոսական

քաղցրութեան առջեւ: Հակառակ կա-
ռավարութեան կողմէ կրած սոսկալի տա-
ռապանքներուն եւ կեղեքութեան,
երբ Պոէրական պատերազմը ծագեցաւ,
Կանտի հնդկներէ բաղկացեալ զթու-
թեան բանակ մը կազմակերպեց եւ իր
հարստահարիչներուն ցուերը ամօքելու
փութաց: (Շարունակելի)
Բաղուած «Հայ Սիր»-ի Բ. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ

ՏՐ. ՁԵՅՄՊԸՐՍԻ ԾՆՆԴԵԱՆ
75ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Պէյրութի մէջ տօնուեցաւ Տր. Ձէյմ-
պըրի ծննդեան 75րդ տարեգարձը,
Ապրիլ 24, կէսօրէ վերջը, Հայ Աւետ.
Ա. Եկեղեցիին մէջ, ուր մեծ բազմու-
թիւն մը փութացած էր իր յարգանքը
մատուցանելու բաղմարդին հայասէ-
րին: Հանդէսին կը նախագահէր եկե-
ղեցիին հովիւը Վեր. Ե. Կէօքէօղեան,
բեմի վրայ տեղ գրաւած էին Վեր. Շի-
րաճեան, Վեր. Անգրէասեան, Վեր. Հա-
սէսեան, Վեր. Շնորհօքեան, որոնք
մասնակցեցան պաշտամունքին եւ Վեր.
Ս. Մանուկեան ու Փրոֆ. Չ. Պէզճեան
որոնք ուղերձներ ւերին: Իսկ հանդէսին
գեղարուեստական մասը կատարուեցաւ
երաժշտագէտ Տիար Յակոբ Իւվէզեանի
ղեկավարութեան տակ:

Վեր. Ս. Մանուկեան գրաւոր շատ
գեղեցիկ ուղերձ մը կարդաց կուռ ու
հիւթեղ պարունակութեամբ զոր կը յու-
սանք ուրիշ առթիւ մեր ընթերցողնե-
րիկայացնել: Հոս միայն յիշենք թէ
Տր. Ձէյմպըրս 1879, Թրքօ-Ռուսական
պատերազմի յաջորդ տարիէն սկսեալ իր
կեանքը նուիրած է հայերուն, նախ Կա-
րինի մէջ եւ ապա (1899) Կիլիկիա եւ մա-
նաւանդ Ատանա, միշտ մասնակցելով
հայ տառապանքին եւ անհուն զրկանք-
ներու ենթարկելով ինքզինքը այդ ծով
վիշտը ամօքելու եւ թշուառութիւնը
դարմանելու համար:

Իւզէզեանի ղեկավարութեան տակ երգիչ խումբի անդերէն մէկ երգեցողութենէն ետքը խօսեցաւ Փրոֆ. Զենոբ Պէզճեան։

«Ասկէ 372 տարի առաջ», ըսաւ յարգելի Փրոֆէսորը, «1558ին մեռաւ Կարուս Ե., իր ժամանակին մեծագոյն գահակալը, որ իր կեանքին վերջերը կեանքէն ա'ւ ձանձրացած վանքի մը մէջ ազօթքով անցուց, իրեն հետ ունենալով հետեւորդներու և սպասարկուներու բանակ մը 150 հոգիէ բաղկացեալ։ Օր մը խորհեցաւ թէ արդեօք մարդիկ ինչ պիտի ըսէին, և իր թագման արարողութիւնը ինչպէ՞ս պիտի կատարէին եթէ ինք մեռնէր. և փափաքեցաւ տեսնել իր կենդանութեանը միջոցին ասոր մէկ նախափորձը, որ իր հրամանին համեմատ ալ կատարուեցաւ։

Ուրախալի պարագայ մըն է որ այսօր կարելի է մօր մեռնելէն առաջ լսել ինչ որ մարդիկ մեր մասին կ'ըսեն։ Հետեւաբար շատ լաւ է ատենէ մ'ի վեր մեր մէջ սրգեգրուած այն սովորութիւնը որուն համեմատ յարգանքի հաւաքութիւնը կը սարքենք մեր աշխատասօրները գնահատելու համար։

Կարգ մը մարդիկ միայն կծու քննադատութեամբ ևւ կամ լուծութեամբ կը գնահատուին իրենց կենդանութեանը միջոցին, բայց գովեստով կը յիշուին իրենց մահէն վերջ։ Ուստի եթէ անոնք գնահատելի են շատ յարմար է որ գնահատուին երբ տակաւին յաւիտեանս մեզմէ չեն բաժնուած։ Բայց ասիկա կրնայ մարդերը փորձել պէտք եղածէն աւելի գովեստներ հիւսելու, դրամ հաւաքելու, կամ ուէ յետին մտքի մը ծառայելու։ Սակայն մենք ասոնցմէ ո'չ մէկուն համար հոս եկած ենք։ Վեր. Մանուկեանի խօսքերուն վրայ բան մը աւելցնել շատ գծուար է, թերեւ հաստատուելու համար մի քանի կէտեր կրնանք յիշել։

Նախ փառք տանք Աստուծոյ որ այս-

պիսի դէմք մը զրկած է մեզի։

Անիկա ճշմարիտ միսիօնար մըն էր, որուն համար միսիօնարութիւնը կոչում մըն էր։ Շատ գիւրութեամբ կրնար ուրիշ ասպարէզներու հետեւիլ, բայց անիկա այս ասպարէզը ընդգրկեց ոչ թէ անգործ մնացած ըլլալուն համար, այլ զայն իր կոչումը զգացած ըլլալուն համար։ Իցիւ թէ մեր պայմանները մեզի ներէին որ կարող ըլլայինք մեր մէջը գործող մեծ դէմքերու կիսարձանները կանգնելու։

Անիկա բարեկամ եղած է ոչ միայն հայերուն՝ այլ բոլոր անոնց, որոնց մէջը գտնուելու առիթը ունեցած է ան։ Անիկա ամէնէն աւելի Հայերուն ծառայեց, անոր համար որ ամէնէն աւելի անոնց մէջ առիթ գտաւ գործելու։

Տը. Զէյնալըս խաղաղութեան և հաշտութեան դեսպան մը եղաւ, անիկա կրցաւ ամէնուն հետ հաշտ և համերաշխ ապրիլ։

Պէտք է յիշել նաև թէ տեղացիներու հետ ունեցած իր բոլոր յարաբերութեանց մէջ երբեք իշխանական հովեր չառաւ, այդ միշտ եղբայրական հոգի ցուցոց։

Գործի մարդ մը եղած է ան։ Կիրիկիոյ Աւետ. Միութեան տարեկան ժողովներուն միշտ ներկայ կ'ըլլար, բայց միշտ քիչ կը խօսէր. զինքը չճանչցող մարդերը կրնային խորհիլ թէ գործի չըծառայող մէկն է ինք։ Բայց ինք փոխանակ մէկ խօսելու երկու կը գործէր։

Այս գործիչը, սակայն, իր գործը կը կատարէր զայն պարտականութիւն և առանձնաշնորհում մը զգալով, նոյնիսկ առանց խորհելու թէ անիկա ծառայութիւն մըն է։

Ահա պատկառելի անձ մը որուն ծառայութիւնը և անունը անմոռաց պիտի մնայ մեր մէջ։

Ապա Վեր. Ե. Կէօքկէօղեան Պէյրութի Ա. Եկեղեցիին կողմանէ արծաթէ զը-

խով զեղեցիկ գաւազան մը նուերեց ծեւրունազարդ գործիչին, որ անկարողութեան զատապարտուած հանդիսատես կ'ըլլար իր տարեգարձին տօնակատարումին, իր երկու կողմը ունենալով իր կիներն ու դուստրը:

Մը. Հ. Րիկս թուղթ մը կարդաց Տր. Չէյմպլըրի կողմանէ, որուն յաղթբայց դողդոջուն մարմինն ու անդամները պատկառազգու աւերակի մը տեսիլքը կ'ընծայէին ներկաներուն: Մը. Րիկս ըսելէ ետքը թէ Տր. Չէյմպլըր չի պիտի ուզեր այսպիսի ցոյց մը, որով նա շատ ազդուած է և որուն համար շատ շնորհակալ է տուաւ թուղթին պարունակութիւնը որն է հետեւեալը կարճ կերպով:

«Ես շատ սիրած եմ այս ժողովուրդը որուն բաղդակից եղած եմ: Բայց ես կ'առարկեմ իմ մասին եղած գովեստներուն, քանզի ես զիտակից եմ իմ սխալներուն և ձախողանքներուն:

Իմ գործունէութեանս մասին երկու կէտ կ'ուզեմ յիշել. առաջին՝ օրէ օր մեզի երկնային ոյժ տրուած է Աւետարանի խոստումին համեմատ. երկրորդ՝ գործունէութեանս երկար տարիներուն մէջ եթէ երբէք յաջողութիւն ունեցած ենք զայն կը պարտինք գործակցութեան:

Ուրախութեամբ զիտելի է սա պարագան որ Հայերը ամէն կոտորածէ ետքը առաջին անգամ դպրոց և եկեղեցի հիմնած են միշտ: Այդ մը ապրելու համար պէտք ունի սա երեք բաներու. —

1. Զօրաւոր մարմին. 2. Մաքուր բարոյականութիւն. 3. Հոգեւոր ոյժ ու կորով:»

Երգիչ խումբի երգեցողութենէն և Վեր. Յ. Շնորհօքեանի օրհնութենէն վերջ ժողովուրդը բաժնուեցաւ խորապէս տպւաւորուած:

ՀԱՅ ԱԽԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Այս տարի Պէյրութի Հայ Աւետ. Ա. եկեղեցիի շէնքին մէջ կատարուեցաւ այս ժողովը, մասնակցութեամբ 40 բնական անդամներու և նոյնչափ ալ պատուոյ անդամներու, որոնք կը ներկայացնէին Սուրիոյ, Լիբանանի և Գահիւրէի 22 եկեղեցիներն եւ Աւետ. համայնքները, միաօնարական կազմակերպութիւնները: Նիկոսիոյ Հայ Աւետ. եկեղեցիի հովիւը Վեր. Սիրական Աղպապեան եւ իբրեւ հիւր նրկայ գլտնուեցաւ բոլոր նիստերուն մէջ: Վեր. Մ. Փախազեանն ու Վեր. Աղպապեանն ալ հաշուի առնելով 13 ձեռնադրեալ հովիւներ կը մասնակցէին ժողովին: Տեղեկագրութիւններ կարդացուեցան կամ խօսուեցան 21 եկեղեցիներու կամ համայնքներու, Հալէպ Գոլէճի, Գործադիր Մարմնի, Ներքին Աւետարանչութեան Մասնախումբին, Ե. Ք. Զանից Միութեան, և «Նոր Աւետարեք»-ի կողմանէ: Ուղղակի Միութենէն կախում չունեցող բայց ընդհանուր հայութեան պատկանող հաստատութեանց և գործերու մասին ալ տեղեկագրութիւններ տրուեցան: Վեր. Ս. Մանուկեան Հալէպի Կոյրերու Վարժարանի մասին, Վեր. Ե. Հատիտեան Մամլթէյնի Թոքախտաւորաց Հիւանդանոցին մասին, Վեր. Ա. Շիրաճեան, Հայ Կարմիր Խաչի (Հալէպի), Ֆրէնկազ Ավ Արմէնիայի կողմանէ հովանաւորեալ Հալէպի մէջ աղջկանց ապաստանարանի և Գամբլլըի կողմերը Թուրքիայէն նորահաս Հայ զաղթականներու տեղաւորման գործին մասին բերանացի տեղեկութիւններ տուին:

Մը. Հ. Րիկս Համաժողովին եւ Վեր. Կ. Յարութիւնեան Միութեան ժողովին Ա. պետ. ընտրուեցան, իսկ երկու Ժողովներուն իբր Ա. դպիր ընտրուեցաւ Վեր. Ե. Կէօքկէօղեան:

Համաժողովը սկսաւ Ապրիլ 23ի առաւօտուն եւ տեւեց մինչեւ Ապրիլ 29ի կէսօրը եւ ունեցաւ 11 նիստեր: Ամէն առաւօտ, Համաժողովի նիստերէն առաջ, Վեր. Մ. Փափազեան Հիւս. Ամերիկայէն սկսեալ իր անցած բոլոր երկիրներու մէջ Հայ կեանքին մասին ընդհանրապէս եւ Հայ Աւետ. եկեղեցիի մասին մասնաւորապէս տեղեկութիւններ հաղորդեց—չոր կը յուսանք «Ճամբու նօթեր Վեր. Փափազեանի» խորագրով յօդուածաշարքի մը նիւթ ընել—հոգեւոր պատգամներ խառնելով անոնց: Ապրիլ 23ի գիշերը Միութեան քարոզը արուեստաւ Վեր. Մ. Փափազեանի կողմանէ դարձեալ, պարզութեան մէջ խորունկ եւ քրիստոսաշունչ, վեհութեան մէջ անուշ եւ ազդու քարոզ մը, որ ներկաներուն հոգեւոր հորիզոնը ընդլայնեց եւ սիրտերը վերացուց:

Ժողովի օրակարգը չափապէս խճողեալ էր: Հոգեպալուստի 1900րդ տարեդարձին առթիւ ժողովի ընդհանուր նիւթ ընտրուած էր Ս. Հոգին, որուն մասին կանխորոշ ութը անհատներու—Պատ. Կ. Գրգեաշարեան, Տր. Ճ. Է. Մէրիլ, Վեր. Ս. Մանուկեան, Վեր. Ս. Սարեան, Պատ. Կ. Ֆարաճեան, Մր. Լ. Էտքինզ, Վեր. Ե. Հատիտեան եւ Մր. Քիկսի կողմանէ ճառեր կարդացուեցան եւ խօսուեցան, իւրաքանչիւրը մասնաւոր բաժանում մը իրեն իրը նիւթ ընտրելով: Այս ճառերուն կը յաջորդէին նիւթին շուրջ գաղափարի փոխանակումներ եւ խորհրդակցութիւններ եւ ջերմեռանդ աղօթքներ: Ամէնէն վերջը Մր. Բիկս աւետարանչութեան մասին յառաջիկայ տարուան միջոցին զործադրելի ծրագիր մը ներկայացուց, որ միաձայնութեամբ ընդունուեցաւ եւ զայն հետապնդելու իրաւասութեամբ մասնախումբ մը եւս որոշուեցաւ:

Ամենահրատապ հարցերէն էին Հուլէպ Գոլէճի տպագրան եւ ներկայ Պոյզ

Հայ Սքուլը, եկեղեցիներուն ելեւմուտքին վերաբերող խնդիրներ, որոնց մասին հարցապնդումներ, թելադրութիւններ եղան: Շատ ուրախալի էր տեսնել որ բոլոր ժողովականները գնահատելով «Նոր Աւետարեք» ի կատարած դերը, ոչնեցած յառաջդիմութիւնը քաջալերական կարգադրութիւններ եւ որոշումներ ըրին, որպէսզի թերթը աւելի ծաւալ գտնէ մեր ժողովուրդներուն մէջ:

Միութեան ժողովը իր եօթը նիստերուն մէջ նկատի առաւ կարգ մը յոյժ կենսական եւ կարեւոր խնդիրներ, որոնցմէ կրնան յիշուիլ հետեւեալները: Ժողովըս միաձայնութեամբ որոշեց փրոֆ. Զ. Պէզճեանը հրաւիրել Ազգապետի պաշտօնին եւ խնդրել իրմէ որ անմիջապէս ձեռնարկէ Ազգապետարանի կազմութեան:

Վեր. Կ. Յարութիւնեանի կողմէ գրծուած Միութեան Սահմանադրութիւնը ուսումնասիրող յանձնախումբը զայն փոփոխութիւններ կայացուց իր բարեփոխեալ ձևերն մէջ, որուն կարեւոր մէկ մասը հաստատուեցաւ ժողովին կողմէ, մնացեալին նկատառումը յառաջիկայ տարուան ժողովին յետաձգուելով: Կիրակնօրեայ Դպրոցներու եւ Ե. Բ. Ջանից Միութեանց մասին խորհրդակցութիւններէ վերջ որոշուեցաւ յիշեալ երկու միութիւններուն ատենապետները, նաեւ «Նոր Աւետարեք» ի խմբագիրը Միութեան բնական անդամ ընդունիլ, պայմանաւ որ անոնք եկեղեցիի անգամներ ըլլան: Եկեղեցական շէնքերու նորոգումը կամ նորերու կառուցումը, Լոնտոնի մէջ գումարուելիք ժողովի մը պատւիրակ զրկելու հրաւերը, Երեսօղէմի Հայ Աւետ. (Նազարէն) եկեղեցին Միութեան անդամակցութեան ընդունելու յանձնարարութիւնը ջերմ համակրութեամբ նկատի առնուեցան:

Գրեթէ ամէն գիշեր Վեր. Մ. Փափազեան քարոզներ տուաւ Պէյրութի երկու Հայ Աւետ. եկեղեցիներուն մէջ:

խուռն բազմութեանց ներկայութեան: Ապրիլ 27ի կիրակին ևս բոլոր օրը ըզբաղեալ մնաց խօսելով եկեղեցիներու մէջ. Զանից Միութեան հաւաքոյթին մէջ, միշտ թարմ ու կայտառ հոգի մը ցուցնելով եւ ստեղծելով ամէն տեղ: Նոյն կէսօրէ ետքը կատարուեցաւ Միութեան Ս. Հաղորդութեան պաշօնը, իսկ գիշերը կատարուեցաւ կրօնական երգահանդէս մը, ղեկավարութեամբ հրաժըշտապէտ Տիար Յ. Իւվէզեանի, ի պատիւ Միութեան, Հայ Աւետ. Ա. Եկեղեցիին մէջ: Երգերը կը ներկայացնէին Յիսուսի Կեանքին կարեոր դրուագները, որոնց մասին եղող հատուածները նախ բարձրաձայն կը կարգացուէին Վեր. Կէօքէօղեանի կողմանէ, և ապա տնոնց պատկերները կը ցուցադրուէին մուգական լապտերով Մր. Հ. Րիկսի միջոցաւ, մինչ համապատասխան երգերը կը կատարուէին: Բոլոր հանդէսը անցաւ յաջողութեամբ՝ խորհրդաւոր բայց կենդանի և ներշնչող մթնոլորտ մը ստեղծելով: Տիար Իւվէզեան և իր երգիչ խումբը մեծ ջանքեր և զոհողութիւններ ըրած էին այս անակնկալ հանդէսը սարքելու մէջ որուն համար ջերմապէս շնորհաւորելի են:

Ե. Ք. Զանից ընկերութիւնները ևս այս տարի ունեցան իրենց համաժողովը նախաձեռնութեամբ Պէյրութի Տեղական Միութեան: Կ'ուզենք այս ժողովի մասին զրեւ երբ տեղեկագրութիւնը հասնի մեզի:

Այս ժողովին կողմանէ Ապրիլի 28 ին կէսօրէ ետքը հաւաքոյթ մը սարքուեցաւ մասնակցութեամբ Պէյրութի ընկերութեանց երկսեռ բոլոր անդամներուն, ժողովի պատուիրակներուն և շատ մը հրաւիրեալներուն, և նախագահութեամբ Տիար Յ. Աբգարեանի: Հաւաքոյթը երեք մասերէ կը բաղկանար, պաշտամունք, տեղեկագրութեանց ընթերցում և բանախօսութիւն Վեր. Մ. Փափազ-

եանի կողմանէ: Տեղեկագրութեանց մասը շատ երկար ըլլալուն համար Վեր. Փափազեան ստիպուեցաւ իր յատկապէս պատրաստած ուղերձը չընել և միայն Ե. Ք. Զանից ընկերութեան արժէքին և նշանակութեան մասին գեղեցիկ խրատական մը տալ, զոր վերջացուց ըսելով. «Պէտք է Քրիստոսի անդամակցիլ Զանից ընկերութեան անդամ ըլլալէ առաջ»:

Ապրիլի 29ին համաժողովի բոլոր անդամները հրաւիրուեցան Վեր. Ե. Հատիտեանի տունը, էշրէֆիյէ բլուրին վերայ նորակերտ և ոռոգչապահական շէնք մը, կէսօրուան ճաշը ընելու համար, որ հաճելի անակնկալի մը յիշատակը թողուց միտքերուն մէջ: Նոյն օրը կէսօրէ առաջ Վեր. Մ. Փափազեան խօսեցաւ «Քրիստոնեայ Քարգիչին Վտանգները» նիւթին շուրջ, իրեն յաջորդեց Մ. Տիագոս, Գուէյքըր միսիօնար մը, որ խօսեցաւ Հայ Առաք. Եկեղեցիի եւ մանաւանդ Հայ Աւետ. Եկեղեցիի դերին մասին, իրր վերացուցիչ ոյժ մը իր միջավայրին մէջ: Կէսօրէ վերջը Վեր. Հատիտեանի տունը և յաջորդ օրը կէսօրէ առաջ ևս կէսօրէ ետքը, Երիցական Առաքելութեան Աստուածաբանական ճեմարանին մէջ խօսեցաւ նաև հետեւեալ նիւթերուն շուրջ:— Հոգեւական այցելութիւններ Եկեղեցավարութիւն կամ Հոգիւր իրրեւ վարիչ, միջնաբերդայ պաշտամունքը, քարոզախօսութիւն, եկեղեցիի մէջ հոգեւոր պաշտամունքը, հոգեւական բարոյագիտութիւն, Հայ Աւետ. Եկեղեցիի յարաբերութիւնները հոգեւոր եղբայրութեանց և Հայ Առաք. Եկեղեցիի հետ: Վերջին նիւթին մասին ներկաներուն առիթ տրուեցաւ իրենց տեսակէտները եւ կարծիքները յայտնելու:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՇՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

Ազատ քաղաքականութիւն Չարչա Տիգրանի
գրողածներէն

ԿԼՈՒԽ Դ.

ԵՐԿՐՈՐԴ ՈՒԻՆ

«Ձեր յարգելի հայրիկն ու փոքրիկ
թիմը ո՞ւր մնացին», ըսաւ Տիկ. Քրէչիթ
«Մարթան աղքատ չեկաւ, անցեալ տարի
Ծնունդին հազիւ կէս ժամ միայն ուշա-
յաժ էր:»

—Ահա Մարթան եկաւ, մայր, գո-
չեցին մանուկները միաբերան, «Մար-
թա՛, Մարթա՛, այսօր սազ պիտի ուտենք:»

«Վա՛յ անուշիկս, եկուր վերջապէս,
որքան ուշացար,» ըսաւ Տիկ. Քրէչիթ,
կրկին ու կրկին համբուրելով զայն:

—Երէկ իրիկուն գործերնիս խիստ
շատ էր, մայրիկ, պատասխանեց Մար-
թա, այնպէս որ մնացածը այս առտու
լմնցնելու ստիպուեցանք:

«Վնաս չունի, հոգիս, քանի որ հիմա
հոս ես, եկուր, աղջիկս, կրակին քով
նստէ, տաքցիր. Աստուած օրհնէ ձեզ,»
պատասխանեց մայրը:

—Ո՛չ, ո՛չ, մայրիկ, գոչեցին փոք-
րիկները, ահա հայրիկը կուգայ կոր,
պահուրտէ, Մա՛րթա, հայրիկը թող կար-
ծէ թէ չես եկած:

Մարթա անմիջապէս պահուրտեցաւ,
հայրիկը ներս մտաւ, զլուխը շալով
փաթթուած, հագուստները հին էին,
բայց լաւ խոզանակուած, Ծնունդը ըլլա-
լուն համար: Փոքրիկ թիմը իր ուսին
վրայ առեր էր—խեղճ թիմը ցմահ դա-
տապարտուած էր անթացուպ գործածե-
լու, և իր սրունքները երկաթ չըջանա-
կի մէջ առնուած էին:

«Բայց ո՞ւր է Մարթան», գոչեց հայ-
րիկը, աչքերը չորս կողմ պտտեցնելով:

—Պիտի չգայ եղեր, ըսաւ Տիկին Քրէ-
չիթ:

«Ի՞նչ, պիտի չըգա՞յ», ըսաւ Պօպ,
փոքրիկ թիմը ուսէն վար առնելով, «Ծը-
նունդին ալ չը պիտի գայ», և իր ուրա-
խութեան յաջորդեց տխուր զգացում մը:

Ճիշդ նոյն լուսնին ամենէն փոքրիկ
երկու Քրէչիթները (քոյր և եղբայր)
վաղելով ներս մտան, պոռալով, կան-
չելով ու երգելով որովհետեւ քիչ առաջ
հացագործին խանութին առջեւ անցած
ատենին իրենց սազը հոն տեսեր էին, ու
իրենց մանկական լիզուով կը ջանային
նկարագրել թէ որքան անուշ կը հոտէր
և որքան ախորժաւամ ըլլալու էր: Ու
սկսան պարել սեղանին շուրջը, մինչդեռ
Պետրոս կրակարանին կրակը կը փչէր՝ ո-
րուն վրայ փաթաթէսի սանը զրուած էր:

Իսկ Մարթա մինչև անգամ կատակի
պատճառաւ չուզելով իր սիրելի հայրի-
կը արամեցնել, անմիջապէս դուրս ելաւ
պահարանի դրան ետեւէն, և իր հօրը
գիրկը նետուեցաւ, մինչդեռ այնտեղ
երկու փոքրիկները թիմը խոհանոցը տա-
րին: Իրեն ցոյց տալու թէ ինչպէս կե-
րակուրը անուշ անուշ կը քփրտար պը-
ղնձեայ սանին մէջ:

Տիկին Քրէչիթ իր ամուսնոյն դիւրաւ
խտրուելուն վրայ զուարթ քրքիչ մը
արձակելէ վերջ «Փոքրիկ թիմը եկեղե-
ցիին մէջ ինչպէս կեցաւ» հարցուց:

—Շատ խելօք կեցաւ, պատասխա-
նեց Պօպ, երբ եկեղեցիէն կ'իլլէինք, ին-
ծի կ'ըսէր թէ կը յուսայ որ մարդիկ իրեն
կը նայէին եկեղեցիին մէջ իր հաշման-
դամ ըլլալուն համար, և կ'ուրախանա-
յին յիշելով որ Յիսուս կաղերն ու կոյրե-
րը կը թշկէր», Պօպի ձայնը կը դողար
այս խօսքերը ըսած ատենը, ու տխուր
մարդը լուեց երբ իր փոքրիկ հաշմանդամ
որդին դարձեալ ներս մտաւ:

(Շարունակելի) (18)

صاحب الامتياز و مدير المسئول

فيس قروبت هاروتونيان